


ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՅՈՒՆԵՍԿՈՒՆ

ՄԵԾ. Հ. ՅԱԿՈԲՈՍ ՎՐԴ. ԲՈՍՊԵՆՔԵԱՆ



կը դառնայ Զոհ քառութեան՝ յորեւեար
Հօր. օծեալ ձեռքերուն մէջ:

Սունկի անոյշ բոյրին եւ ամպացող մը-
շունքին մէջ, Յորեւեար Հօր յիշողութիւնը
կը դառնայ հին տարիներուն, յուզումով
կը վերապրի ամբողջ կեանք մը, հեռաւոր
Պիլեծիկէն մինչեւ Ս. Ղազար, անկէ Պար-
տիզակ, Պոլիս, Փարիզ, Վենետիկ, եւ
հուսկ դարձեալ Պոլիս: Ու մտքին մէջ
կ'արթնան օրեր փառքի, օրեր սուգի,
տեղահանութեան դրուադներ. աչքերուն
առջեւ կը պատկերանան որբեր բազմա-
թիւ, որոնց եղած է հայրիկ ու դաստիա-
րակ՝ Պոլիսէն մինչեւ Միլան:

Յետոյ երկու պատերազմներու ընդմէ-
ջէն՝ հասունցած, գիրքի եւ ընտանիքի
հայրեր դարձած սերունդներ, իր սիրելի
աշակերտները, կու գան այսօր շարան
շարան իր հետ միասին դովքն հիւսելու
Աստուծոյ անսահման բարութեան, որ իր
սիրոյ մէջ ծաղիկը դրեր է Հ. Յակոբոս
Վրդ. Բոսպենքեանի սրտին մէջ. եւ այդ
ծաղիկը՝ բուրաստան մըն է դարձած
այսօր, ուր բազմաթիւ հայորդիներ կը
տեսնեն ժպիտ, սէր, սիրտիանք:

* * *

Ծնած 1886ի Ապրիլ 29ին, Պիլեծիկ,
նախ կը յաճախէ տեղւոյն Ազարեան վար-
ժարանը: 1901ի գարնան, Մայիսեան վար-
դերուն հետ, չքնաղ վարդ մըն ալ կը
բացուի փոքրիկ Յովսէփին սրտին մէջ,
կրօնաւորական կեանքի նուիրութիւնը բու-
սն փափաքը. ու ինքն ալ շուտով կը
դառնայ վարդ մը Միլիթարեան պարտէ-
զին մէջ:

Ուսումնասէր ու բարեպաշտ պատանին,
1905ին, ուսման առաջին շրջանը աւարտե-
լով՝ կ'անդամակցի Միաբանութեան, եւ
ուսումնական յանձն կ'առնէ զինուորապետի
Միլիթարի հետեւորդներու շարքին:

1911ի Յունիս 4ին, յետ բոլորելու փի-
լիսոփայական եւ աստուածաբանական
ուսումները, ահա կը բարձրանայ Սուրբ
Խորան, ձեռնադրուելով վանքին Արքա-

հայր՝ Գերայ. Իղնատիոս Արքայ. Կիւրե-
ղեանէն:

Այնուհետեւ կը բացուի իր առջեւ դու-
րանէութեան ասպարէզը: Կը գտնենք
զինք իսկոյն Սուրառ-Ռափայէլեանի մէջ,
իւր հսկողապետ եւ ուսուցիչ: 1913ին կը
հանդիպինք իրեն Պարտիզակի մէջ, ուր
Միլիթարեաններս ունէինք առաքելութիւն
եւ վանատուն. 1915ի տեղահանութեան
օրերուն՝ կը փախչի Պիլեծիկ, եւ աղէտէն
ճողոպրած 6-7 ամիս վերջ կ'անցնի Պո-
լիս, պաշտօնավարելու մեր Բերայի վար-
ժարանին մէջ եւ ապա Քաղկեդոնի մեր
որբանոցին մէջ պաշտօնավարելու:

1922ին Վենետիկ վերադարձած, կը
պաշտօնավարէ Միլիթարեան տպարանի
մէջ, նախ իւր օգնական, ապա իւր վա-
րիչ. տպագրած է 1926ի Թէոգիկի տա-
րեցոյցը: Այդ թուականին վերջերը զինք
կը գտնենք Միլանու Միլիթարեան որբա-
նոցին դուռը, չորս տարի շարունակ
հայրօրէն միլիթարելու եւ կրթելու ա-
պրիլեան դժբախտ սերունդը:

1930ին պահ մը կ'անդ կ'առնէ Պուրքէշի
մէջ, արժանաւորապէս ներկայացնելու
Միլիթարեան Միաբանութիւնը՝ հայկ. ե-
կեղեցական ու զրաւանք ցուցահանդէսին:
Անկէ կ'անցնի Պոլիս, իւր տեսուչ Միլի-
թարեան վարժարանին, ուր կը մնայ եօ-
թը տարի: Այս շրջանին է որ Հ. Յակոբոս
Վրդ. կը հասցնէ ու կը հասունցնէ բազ-
մաթիւ սաներ, ջամբելով ու ներշնչելով
անոնց ոգի, կազմակերպութիւն, խանդ,
խորհուրդ եւ զգօն առաջնորդութիւն:

1937ին կ'անցնի Փարիզ, Սեւրի վար-
ժարանին մէջ պաշտօնավարելու իւր ու-
սումնապետ եւ փոխ-տեսուչ, լուսահոգի
ու բազմալատասակ Հ. Սահակ Տէր-Մով-
սէսեանի կողքին:

Պատերազմի արհաւիրքին տակ, 1939ին
կը վերադառնայ Վենետիկ, կը ստանձնէ
Մ.-Ռափայէլեանի մէջ մատակարարի
դժուարին պաշտօնը, կատարելով նաեւ
ուսուցչութիւն: 1942ին կ'անցնի Ս. Ղա-
զար: Պատերազմէն վերջ, 1947ին կը մեկ-

նի Պոլիս, Միլիթարեան վարժարանին Տե-
սուչի պաշտօնով. 1950ին, լուսահոգի Հ.
Բենիկ Վ.ի հիւանդութեան պատճառով՝
կը ստանձնէ նաեւ կալուածներու մատա-
կարարի պաշտօնը, եւ անոր մահէն վերջ,
1952ին, կը նշանակուի Մեծաւոր: Կը ըս-
տանայ վարժարանին քաղաքական Տեսու-
չի տիտղոսը, հաստատուած Կրթ. Նախա-
րարութեան: 1961ին, իր յիսնամեայ յո-
րելեանէն վերջ, տեսչական պաշտօնը կը
յանձնէ Հ. Անտոն Ճիւսեանի:

Այսպէս, հանդուրանէ հանդուրան, Հ.
Յակոբոս ցանած է ամէն կողմ բարիք. եւ
նշանն ատոր՝ այն յարգանքը անվերա-
պահ, զոր բոլոր իր աշակերտներն ու բա-
րեկամները կը տածեն իր անձին հանդէպ:
Կրթական դործունէութեան եւ մատա-
կարարական բազմադրազ կեանքին առն-
թեր, իր վայրկեաններն օգտադործելով,
Մեծ. Հ. Յակոբոս Վրդ. կատարած է
նաեւ զրական աշխատանքներ. թարգմա-
նած է

1) Ռենէ Պագէշի՝ Երկիրը որ կը մեռնի
(տպ. 1926, էջ 263):

2) Էմիլիոյ Սալկարիի՝ Երկու հազար
մոլոն Ամերիկայի մերձեւ (տպ. 1931, էջ
312):

3) Կուզ Սիմոն, Վիպակ Փրանսական
յեղափոխութեան, (տպ. 1924, էջ 67):

Ունի նաեւ ձեռագիր աշխատանքներ.
Պատմութիւն Միջին դարու, ինչպէս նաեւ
բառարանային պրպտումներ եւ սրբագը-
րութիւններ:

Մենք կը մաղթենք տակաւին երջանիկ
տարիներ, որպէս իր օրինակելի եւ ժիր
դործունէութեամբ քաջալեր ու առաջ-
նորդ հանդիսանայ նոր սերունդներուն,
որոնք միշտ պիտի օրհնեն իր փորձառու
օժանդակութիւնը: Իրրեւ կազնի մը հի-
նաւորց, թէն մարմինով փոքրիկ, կուրծք
տալով ամէն փոթորիկի, փրկէ ու պահ-
պանէ իր խնամքին յանձնուած հայորդի-
ները բոլոր, ամէնուն բաշխելով իր մեծ
հոգիէն կայծեր սիրոյ եւ եղբայրութեան:

Հ. Ն. Տ. Ն.